

Տարեկան գինը 10 լուրջ, կէս տարվանը 6 լուրջ:
Առանձին համարները 7 կօպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբադրատան մէջ:
Մեր հասցէն. Տիֆլիս. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

うるわし

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչյուր բառին 2 կոպէկ:

A circular library stamp from the New York Public Library. The outer ring contains the text "NEW YORK PUBLIC LIBRARY". The inner circle features a crest with a central figure, possibly a lion or unicorn, flanked by wings, with the words "THE NEW YORK PUBLIC LIBRARY" written around it.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Մի նոր ըլջան գերմանիայի արևելեան քաղաք-
քականութեան մէջ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քա-
ռորդ դար անցնելուց յետոց. Նամակ Բագուից.
Ներքին լուրեր.—ԱՐՏՍ.ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աւա-
րո-ՌԱՆԳԱՐԺԱՅԻ ներքին յուզմունքն երը. Արտաքին
լուրեր.—ԽԱ.ՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌՍ.ԳԻՐՆԵՐ.—ԹԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մասենա-
զրութիւն.

ՄԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ Ա-
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԶ

Սինչեւ վերջին ժամանակները Գերմանիան,
քաղաքականապէս թոյլ և բաժան բաժան
եղած, ոչ մի գեր չը կարողացաւ խաղալ
արևելեան հարցի մէջ, ինչպէս էլ, ուրիշ
կողմից, երբէք չը կարողացաւ զբաղվել
գաղթականական (կօլօնիալ) քաղաքակա-
նութեամբ: Ֆրանսիային յաղթելուց և
գերմանական միութիւնը վերջնականապէս
հաստատելուց յետոյ, Գերմանիան սկսեց
այժմ թէ դրական ներգործութիւն ունե-
նալ արևելեան հարցի վրա, և թէ ձգտել
դէպի հայրենիքից դուրս օտար երկիրներ
ձեռք բերելը, այնտեղ իր գաղթականու-
թիւնները հաստատելու նպատակով:

Արևելեան հարցի վրա գերմանիան, թէկւ
անուղղակի կերպով՝ ներքործութիւն ունի
իր քաղաքականութեանը խոնարհ Աւստ-
րիայի միջոցով, նրա օգնութեամբ ներգոր-
ծելով Բալկանեան թերակզու գործերի ըն-
թացքի վրա: Աւրիշ կողմից գերմանիան
տեսնելով որ իր հպատակները ամեն տարի
հազարներով գաղթում են իրանց հայրե-
նիքից դուրս և համոզվելով որ Նոր-Աշ-
խարհը, Ամերիկան շուտով այլ ևս չի կա-
րողանայ զետեղել իր մէջ գերմանական
պրօլետարիատի ահագին և տարուց տարի
աւելի բազմաթիւ դարձող գաղթականու-
թիւնը, սկսել է երկու-երեք տարի առաջ,
իշխան Բիսմարկի նախաձեռնութեամբ, տե-
ղեր որոնել իր համար հին աշխարհում:

Բ Ա Ն Ա Ս Ի Բ Ա Կ Ա Ն

W. W. H. G. P. A. P. M. E. T. U. S. M. S. N. J. P. L.

‘**Ս**ի ալսութ որպէս հաճոյք և թշշ-
ւառութիւն մարդու, պրօֆ. Ի. Գոգելին:
Եղբորդ հրատարակութիւն:

սի Փիլիսոս: Դրանց ազգեցութիւնը առողջութեան, կեանքի, և մարդու ու նրա սերնդի հիւանդութիւնների վրա: Բժշկակնեալու Ա. Խլինսկու: Սակայն, 1887 թ.

Այդ երկու գլքերն ևս խօսում են մի և նոյն
առարկայի մասին: Չէ կարելի չուրախանալ, որ
վերջապէս զիտութեան մարդիկն ևս հանդէս
դուրս եկան այդ չարիքներից մարդկութիւնը
սլաշտապաննելու համար: Ամեն անսակ խրատներ
աւելի իրական են և ազդեցութիւն են գործում,
երբ նրանք ազդում են ոչ միայն սրտի վրա, այլ
և խելքի վրա: Բաւական չէ ասել՝ «այդ վատ է,
այդպէս չը պէտք է անել»—պէտք է ատպացուցա-
նել, որ դա վնա աս ա կ ա ր է, որ այդպէս վար-
վողը նախ և առաջ և ամենից աւելի լինքն իրան
է վնասում: Ահա այն ժամանակ ամեն այդ տե-
սակ խրատներ աւելի համողեցուցիչ են: Փշացած
(պօրօնակ) հակումներ ունեցողը կը զգուշանայ

Այդպիսով 1884—1885 թւին գերմանիան
և առաջարկ բերեց Աֆրիկայի Կօնդօ ահազին եր-
կիւրը: Զգտելով գեպի այդ տեսակ հեռաւոր
Երկիրների ձեռք բերելը, Գերմանիան համ-
հիմք է դնում մեծ պետութիւններին
յատուկ համաշխարհային քաղաքականու-
թեան, կամենալով դեր խաղալ ընդհանուր
մարդկային քաղաքականութեան հարցե-
րում, համ տեղ է պատրաստում իր հպա-
տակ պլուչտարիատի գաղթականութեան
համար, համ էլ վերջապէս, պետութեան
սահմաններից գուրս նոր վաճառանոցներ
է բաց անում իր ներքին արդիւնաբերու-
թեան արտահանման համար:

Բայց, ինչպէս երկում է, ժամանակակից
միացած Գերմանիան, Բիսմարկի Գերմա-
նիան, այդքանով բաւականանալ դիտառ-
րութիւն չունի, այլ աչք է զրել արդէն և
ասիական երկիրների վրա, Պարսկաստանի
և Փոքր-Ասիայի վրա, այս անդամ այլ ևս
ոչ թէ ուրիշի օգնութեամբ ներգործել ու-
ղելով, ինչպէս Բալկաննեան թերակղզու վրա
Աւստրիայի օգնութեամբ, իսկ Կօնդօյում
Բելգիայի օգնութեամբ, — այլ ուղղակի ան-
կախ կերպով առանց ոչ ոքի օգնութեան,
իր սեփական ոյժերով և պատասխանա-
տութեամբ:

Հիմք վենցու գերմանիայի ուղղակի սլ
գործութեանը Փոքր-Ասիայում։ Գերմանա-
կան ծագում ունեցող փաշաները կ. Պօլսում
իրանց ամբողջ հեղինակութիւնը գործ են
զնում Բ. Դրան համոզելու, —Պ ը է ս է Լ ի
գերմանական ընկերութեանը մի կ օ ն ց է ս
ս ի ա տալու՝ Փոքր-Ասիայի միջով երկա-
թուղու մի գիծ անցկացնելու համար։ Եր-
կաթուղու այդ գիծը պիտի անցնի ասիա-
կան Թիւքրիայի միջով՝ Խզմիդից մինչև
Դիարբեքիր։ Պրէսսէլի ընկերութիւնը ստա-
նալու է, ինչպէս հաղորդում են լրագիրնե-
րը, շինվելի երկաթուղու ամբողջ երկայ-
նութեամբ ամենաբերի ընդարձակ հողեր,
որոնց գերմանացիք կարող են ամեն կերպ
մշակել, օգտվելով Փոքր-Ասիայի ամեն ազ-

թիւններին պատկանող բնիկների պար-
ովիր աշխատանքից: Երկաթուղու գծի
կայնութեամբ զիտաւորութիւն կայ հիմ-
ոչ թէ միայն զերմանական զիւղեր և
աններ, բայց և նոյն իսկ ամբողջ քա-
քներ, որոնց մէջ բնակիչների բանւոր
կը բաղկանայ ասխացիներից, իսկ
ջին ու բարձր դասակարգերը, ի հարկե,
բանացիք կը լինեն:

Դա լինելու է, ինչպէս և առաջարկում
թիւրքաց կառավարութեանը պ. Պրէս-
լի ներկայացրած ծրագիրը, մի բուն
լումանական, ընդարձակ կօլօնիա, որ
լատ կը լինի թիւրքաց ամեն տեսակ
որկերից, և որ միմիայն կենթարկվի
հւրքիայում եղող զերմանական գիւղօմա-
հական ներկայացուցիչների իրաւասու-
եանը: Այն գերմանացիք, որոնք բնակվե-
ւ են այդ նոր զաղթականութեան մէջ,
նիսախտ կը պահպանեն իրանց գերմա-
սկան հպատակութիւնը, և նրանց որդիք
հնչե անգամ գերմանիա կուղարկվեն ի-
մոց զինուորական պարտաւորութիւնը
ատարելու համար: Աերադառնալով Փոքր-
սիա, գերմանական պահեստի զօրքեր
ազմող այդ երիտասարդները շատ պիտա-
ի կը լինեն գերմանական նոր կոլոնի-
ն շը ապատող բարբարոս հրոսակներից
լաշտպանելու համար:

ի և ընկերութեան ծրագիրը շատ ճար-
պիկ կերպով կազմած ծրագիր է:
Պ. Պրէսսէլ, ինչպէս երևում է, միմիայն
սփէրիստ չէ, այլ ձգտում է քաղաքական
ուրծիչի դեր խաղալ: Անցեալ տարի գեր-
անական կառավարութեանը իր ներկա-
յացրած ծրագրում նա ուղղակի և բա-
րձակ կերպով յայտնում է իր ձեռնար-
ութեան նպատակը: Նա ասում է որ առ-
ոյժմ գերմանիան գեռ ևս զուր կը գարձ-
ուի իր ուշաղրութիւնը Պարսկաստանի վր-
ա, քանի որ այդ երկրում գեռ ևս շատ
քիչ վաճառանոցներ կան գերմանական
սրդիւնքների համար, և գերմանական մի
ոլոնիզացիա Պարսկաստանում հաստատե-

դեռ ևս վազաժամ՝ պէտք է համարել:
իս և առաջ, աւելացնում է Պրէսսէլ իր
ազգի մէջ, պէտք է զեռ ևս ձեռք բերել
քըր-Ասիան, որպէս Պարսկաստանի ն ա-
ա գ ա ւ ա ռ (Vorland) և ապա մտածել
րմաննական ազգեցութիւնը աւելի չեռու
ելու: Փոքր-Ասիայի ամեն ազգութիւննե-
ն պատկանող ազգաբնակութիւնը Պրէս-
լ համարում է շատ նպաստաւոր „հում-
ոթ“ ժամանակով գերմանացած լինելու
սմար:

Հաւատացնում են որ Պրէսսէլի ծրագիրը
նու ամենայնիւ չափաւոր է երեսում
ըլլինում, և գերմանիայի մայրաքաղա-
ւմ աւելի մեծ ուշադրութիւն է դարձ-
ծ մի ո՞ն Դէյչ գերմանացու ծրագրի
ա, որ աւելի էլ համարձակ է, պահան-
ջով աւելի վճռողական, աւելի դրական
շուտափոյթ գործողութիւն՝ Փոքր-Ասի-
այի մէջ գերմանական ազգեցութեան հաս-
տաման վերաբերմամբ:

Այդ տեսակ պատրաստութիւններ տես-
լով հանգերձ, գերմանական զիպօմատի-
ն, իր պետական կանցլէրի բերանով, ինչ-
ես արդէն յայտնի է ընթերցողին, նորե-
ւում կեղծաւոր կերպով հրապարակապէս
այտնել է որ ամենեին արգելք դնելու չէ
ուսաստանին երթալ դէպի Կ. Պօլիս Փո-
ւը-Ասիայի միջով:

下

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՌՈՐԴ ԴԱՐ ԱՆՑՆԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ

Մեր թատրոնական կեանքին վերաբերեալ եղուու իրողութիւն նորերումս ակամայ ուշադրութիւն են գրաւում: Դոցանից մէկը այն քսան և ինդ-ամեայ յօբելեանի տօնախմբութիւնն է, որը սպրիլի 30-ին կատարվեցաւ Թիֆլիսում ի պարիւ հայ գործչի, —իսկ միւսը հայ թատրոնի պազայի հարցն է, որով զբաղվեցաւ Հայոց Դրամատիական ակումբի ընդհանուր ժողովը մայիսի

Ծխախոտը պարունակում է իր մէջ էլի մի կը-
ծու նիւթ, որ նիկօցիանին է անուանվում (այդ-
պէս անուանված ծխախոտային կամֆօրա): Եւ այդ
նիւթը խխտ թունաւոր է, թէպէտ թոյլ է նիկօ-
տինից. Նիկօցիանինի ազդեցութեան տակ թու-
նաւորվածների մօտ նոյն նշաններն են երևում,
ինչ որ և նիկօտինից, բայց այդ նշանները նիկօ-
տինի նշաններից թոյլ են, աւելի ուշ են երևում
և եթէ ասհրաժեշտ բժշկական օգնութիւններ
հասցնեն, նիկօցիանինով թունաւորվածի կեանքը
ազատել կարելի է, այն ինչ նիկօտինով թունա-
ւորվածին, թոյնի արագ ներդրութեան պատ-
ճառով, ոչինչ միջոցներ չեն կարող օգնել. այդ
տեսակ թունաւորվածի կեանքը ազատելու միակ
միջոցը նիկօտինով թունաւորվելուց յիսոյ իսկոյն
զեղթափ ընդունեն է: Ահա այդ պատճառով նի-
կօտինով բոլոր թունաւորվածները շուտով մնո-
ւում են, եթէ մինչև անգամ թոյնն ընդունելուց
մի կարծ ժամանակ յիսոյ նրանց մի որ և է օգ-
նութեան են հասանալի:

Ա Երջին հետազօտութիւնների համեմատ, ծխա-
խոտը, բացի նիկօտինից և նիկօցիանինից, պա-
րունակում է իր մէջ էլլի մի փոքր քանակութիւն
կապտաթթւուտ, (СИНИЛЬНАЯ КИСЛОТА) որը պատ-
կանում է ամենազօրեղ և վայրկենապէս ներգոր-
ծող ան թռնների շարքին, որոնք թունաբորում

Ան ամենալիորը քանակութեամբ։
Այդ բոլորից հետևում է, որ ծխախոտը ամենազօրեղ թոյներից մէկն է։
Ապա պ. Խլիսակի քննում է ծխախոտ գործա-

ծելու բոլոր եղանակները:

1) Ծխելը շատ վնասակար է, ծխախոտ ծըխելը, որպէս խանգարող ֆիզիոգիական նշանաւոր գործողութեան—չնչառութեան և նըրանից կախված գագերի փոխանակութեամբ թոքե

и то, что в дальнейшем оно неизменно будет на-

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Այսօր, ամսիս Ե-ին, տեղի ունեցաւ բա
տօնավաճառի հանդիսաւոր բացումը։ Տօնակ
ու կրում է Նիկողայոս ու եան անոն
պատի թագաժառանգի։ Այս բացումով փա
փեցաւ այն կասկածը, որ տօնավաճառի այս
րի բացվելու մասին ունեին թէ վաճառական
և թէ բացուցիները Հանգէսր շքեղ էր և փ
ւոր։ Ուղիղ ժամկի 11-ին կառարկեցաւ երե
ղուներով ուղևրէն, հայերէն և թուրքերէն,
թանք, որին ներկայ էին՝ նահանգապետա
պաշտօնեաներով, քաղաքային իրաւասուները
դաքաղլի առաջնորդութեամբ և խուռն բա
թիւն բարձրաստիճան մարդիկների, զան
կողմից եկած վաճառականների և ժողո
որոնց թիւը համում էր մի քանի հազարի։
թանքից յետոց պ. նահանգապետը երկու խ
յայսնեց որ «տօնավաճառը այսօր ներքին

լինը
մելի
սող-
ոքե-
պէս
ու-
աջ
ոկ է

ինը
մելի
սող-
ոքե-
պէս
ու-
աջ
րտը

պայման կերպարանսափոխութեան:

Նիկօտինի սպանիչ ներգործութիւնը ջղան մաս կար գութ և ան վրա, որպէս նկատվում է դրանով թունաւորվողների նշարից, անկատաձելի է, և այդ պատճառով ջեղով որ ծխելու և խլաքանչիւր անգամ խոսի այլ կերպ գործածելու ժամանակ ամէջ գորք քանակութիւն նիկօտին է մտնում մանակի ընթացքում խորին փոփոխութիւնն կատարվում ջղային համակարգութեան մէջ, և մէջքի և զվիս ուղեղի մէջ: Անկատաձ է, որ տինի աղղեցութեան տակ ծխախոտ գործածում ջղային նիւթը մնի փոփոխութիւնների թարկվում, և այդ պատճառով նրանց ջղային ակարգութիւնը աստիճանաբար խանդարվուացնալով միացն կարելի է բացատրել, որ ծխոգործածողներից մի քանիները կարծես պատճառի ատանում են ջղային հիւան թիւնն են և որ, որպէս՝ ձեռքերի դողումն, ցաւ, ցնցումն, և վիտայի պար, մասն և ընդհանուր կաթուածներ, խելազարութիւնն այն Այդ հիւանդութիւնների ծագման մէջ խոտը ացքի ընկնող գեր է խաղում: այն ին միայն հասարակութիւնը, բայց և շատ բժիշկներ երեցին առանձին նշանակութիւն չեն վս նիկօտինի աղղեցութեանը, թէպէտ և բժիւ գէպքերում, ջղային հիւանդութիւնների ծը ուրիշ պատճառներով բացատրել անկարգ

ծերի և Գինանսների նախարարների համատառութեամբ բացված է համարկում։ Նահանգապետի խօսքերից յետոյ տօնավաճառի գոյնզգոյն դրոշակը ծածանվելով պարզվեցաւ. նահանգապետից յետոյ տեղիս ուռսաց քահանան մի կարճառօտնաւ ասեց, բացարելով, ՚ի միջի այլոց, տօնավաճառի նշանակութիւնը բագուի համար։ Այդ բոլորից յետոյ մի խումբ մարդիկ, որոնք քաղաքի կողմից առանձին կերպով հրավիրված էին, դիմոցին գէպի մի փայտեայ շինութիւն, ուր պատրաստված էր նախաճաշիկ։ Նախաճաշիկի ժամանակ առաջարկվեցան Թագաւոր կայսրի, Թագուհի կայսրուհու, Թագավառանդի, Կովկասի կառավարչակետի, Նահանգապետի և ուրիշների կենացները, որոնցից ամեն մէկին յաջորդում էր ուռան և օրկեստրի նուռագածութիւնը։

Այսպիսով ուրինն տօնավաճառը պաշտօնապէս բացվեցաւ։ Թէև պաշտօնապէս բացված է, բայց դեռ առևտուր ըս կայ։ Շատ խանութիւներ գետ պատրաստ չեն և չատ վաճառականներ չեն համարձակվում իրանց ասլրանքները զետեղել տօնավաճառի փայտեայ շինութիւնների մէջ, ուր ամեն բոցէ կարելի է սպասել հրդեհ։ Վաճառականներից շատերը յայտնել են, որ կը համաճայնվեն այն ժամանակ միայն, երբ ապահովացնող ընկերութիւնը կապահովացնի իրանց ասլրանքները։ Ուժու է նետուի, ու այս եռաւանի է ուղարկութիւնը։

ների երկիւղը, քանի որ քաղաքային վարչութիւնը թոյլ է տալիս մի տօնավաճառի հրապարակի վրա շինել հիւրանոցներ և «խարչմաներ»։ Եթէ, յիրաւ, կրակ յայտնի այդտեղ, այն ժամանակ էլ փրկութիւն չը կայ փայտեայ խանութներին, չը նայելով որ կամ հրաշէլ մեքենաներ և ջուր։ Տօնավաճառը ստանդանվում է ոստիկաններով և մի հարիւր կազակներով։

Տօնավաճառին մասնակցող վաճառականների թիւը շատ չէ. մինչև այժմ եկողներ եղել են Աստրախանից, Թիֆլիսից, Կազանից, և մօտ մի 10 վաճառական էլ բուխարայից։ Առ այժմ բերուծ ապրանքներից աշքի են ընկնում թէյ, ամանեղէն, երկաթի շինուածքներ։ Կանօնաւոր առևտուգը կը սկսի մի քանի օրից և ստու:

ՆԵՐՔԻՆ ՀՈՒՐԵՐ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեղ զրում են: «Առևետը մեկանում շատ լինկած զրութեան մէջ է. խանութպանները առաւօտից մինչև երեկոյ անհամբ բեր սպասում են որ մի մարդ զայ բան առնելու բայց չը նայելով առեատի այդ թշուառ վիճակին զարձեալ երբ մէկը խանութ է մտնում, մեր վա-

Բայց դրանով չէ սահմանափակվում ծխելու վեասք:

Ծխախտի ծուխը, մանելով բերանը, զրդիչ ապդեցութիւն է զործում բերանի լորձային թագանթի, լեզուի և թքի խոզերի վրա, որի պատճառով և սկախում է մեծ քանակութեամբ թռուք գուշակում գալ բանի ից: Բայց դրանից առաջ ծխախտի ծուխը ներգործում է և ծխողնե-

Ծիմելը ստամոքսի ամենն տեսակ խրօնի ական
կատարրի սկզբնապատճառն է: Աղի և համեմաւոր
նիւթերը գրգռում են ստամոքսը, բայց մի և նոյն
ժամանակ թուշացնում են դրան, և այդ պատ-
ճառով ստամոքսը անդադար պահանջում է աւելի
զօրեղ գրգռիչ միջոցներ և, վերջապէս, հրաժար-
վում է կերակուրը մարսելուց. այս ժամանակ
հանդէս է դալիս դիմատա, բայց ծխախոտի ծխելը
այնու ամենայնիւ շարունակվում է և հետեանքը
լինում է ստամոքսի անբուժելի հիւանդութիւնը

Այդ պատճառով այժմեան ժամանակ շատ
գժուար է հանդիպել լաւ մարտղութիւն ունեցող
մարդուն, և եթէ այդպիսին կը գտնվի, ի հարկէ
ծխողների թվոց չի լինի: Եւ իրաւ, զարմանալլ
չի արդիօք, որ ըստ երեսոյթին կատարելապէս
առողջ մարդկանց մօտ, որոնց ծնողները և պա-
պերը ստամոքսով առողջ էին, յանկարծ ցաւում
է ստամոքսը: Զը նայելով բժշկութեանը, այդպիսի
հիւանդները հալվում են և մեռնում են ուժաս-
պաս լինելուց, սովորականով. բայց ոչ մէկը այդ-
պիսի հիւանդներից չի մտածի, որ ծխախոտը կա-
րող էր այդ սարսափելի հիւանդութեան պատ-
ճառ լինել:

